

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ս_

.05.2017

ք. Երևան

_____ անձի ազգանունը, անունը) այսուհետ՝ «Զբոսաշրջիկ», մի կողմից, և «Էլիտար» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս՝ տնօրեն Սամվել Կարաբեկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Զբոսաշրջիկի համձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևալ ծառայությունները

1.2.1 Տեղաբաշխել (տեղավորել) զբոսաշրջիկին հետևյալ վայրում

Հյուրանոցի անվանում	
Մարզ, Քաղաք	
Մենյակների տեսակ	սենյակ
Ժամանակահատված (ըստ օրացուցային օրերի)	.05.2017-.05.2017
Անձանց քանակ	
Գիշերների քանակ	

1.2.2 Ապահովել Զբոսաշրջիկի շրջագայությունը հետևյալ երթուղով _____

(մանրամասն կոնկրետ օրերով նշվում է Զբոսաշրջիկի շրջագայության երթուղին նրա գտնվելու երկրի կոնկրետ վայրից ըստ մեկնման և ժամանման վայրերի, (ներառյալ տեսարժան վայրերը, շրջագայության ընթացքում միջանկյալ գիշերակացի անհրաժեշտության դեպքում այն ապահովող հյուրանոցային տնտեսության օբյեկտների լրիվ անվանումը, ամբողջական հասցեն, տեսակը և կարգը) և նախնական ժամկետների, այդ շրջագայությունն ապահովող տրանսպորտային միջոցի տեսակը, դասը :

1.2.3. Կատարողը պարտավորվում է Զբոսաշրջիկին տեղաբաշխման/տեղավորման վայրում, այն է՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտում և /կամ շրջագայության ընթացքում, այդ թվում՝ միջանկյալ գիշերակացի վայրում ապահովել սննդի կազմակերպումը մատուցումը ըստ հետևյալ պայմանների՝

Մուտնդ	Ժամեր
3 անգամյա	
2 անգամյա	
Նախաճաշ	
Այլ	

1.3. Զբոսաշրջային ապահովագրության տեսակը և չափը _____
 Լրացվում է ըստ ապահովագրության պայմանագրի պայմանների

1.4. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները մատուցված են համարվում, եթե 1.3 կետով նախատեսված ժամկետի ավարտից 3 աշխատանքային օրվա ընթացքում, Զբոսաշրջիկի կողմից գրավոր պահանջներ չեն ներկայացվում ծառայությունների որակի կամ ծառայությունների չմատուցման մասով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

- 2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.
- 2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում.
- 2.1.3. Պատվիրատուի պահանջով առավելագույնը 1 օրվա ընթացքում անհատույց վերացնել առաջացած բոլոր թերությունները.
- 2.1.4 Ներգնա զբոսաշրջային ուղորություններ կազմակերպելիս ապահովել զբոսաշրջիկների հետ անկաշկանդ շփման համար անհրաժեշտ լեզվի կամ օտարերկրյա գործընկերոջ հետ նախատեսված պայմանագրով համաձայնեցված լեզվի իմացությամբ զբոսավար ներ կամ ուղեկցողներ:
- 2.2 Կատարողը պարտավոր չէ արտագնա զբոսաշրջային ուղևորությունների կազմակերպելիս ապահովել համընդհանուր օգտագործվող լեզվի իմացությամբ կամ օտարերկրյա գործընկերոջ հետ համաձայնեցված լեզվի իմացությամբ զբոսավարի առկայությունը:
- 2.3 Զբոսաշրջիկը ժամանակավոր բնակության և տարանցման վայրերում իրավունք ունի՝
- 2.3.1. ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,
- 2.3.2 ստանալ անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանության երաշխիքներ:
- 2.3.3 օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:
- 2.3.4 իր համար հասկանալի լեզվով Կատարողից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն ժամանման երկրի (վայրի)՝ զբոսաշրջության հետ առնչվող օրենքների և բնակվելու կանոնների, տեղաբնակների սովորույթների, հասարակական և կրոնական ծիսակատարությունների, վարքագծի կանոնների, մշակութային, հնագիտական, ճարտարապետական, պատմական և բնական արժեքների, ապահովագրության պայմանների, սույն պայմանագրի պայմանների մասին: 2.3.5 օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2.4 Զբոսաշրջիկը ժամանակավոր կեցության և տարանցիկ վայրերում պարտավոր է՝

- 2.4.1. պահպանել սույն պայմանագրով նախատեսված պայմանները և կանոնները,
- 2.4.2. հարգել ժամանման երկրի (վայրի) ավանդույթները, սովորույթները, կրոնական հավատալիքները:
- 2.4.3 չխախտել հասարակական կարգը, պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները:
- 2.5 Ժամանակավոր կեցության և տարանցիկ վայրերում զբոսաշրջիկը պատասխանատվություն է կրում գտնվելու վայրի օրենսդրությամբ սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների վճարումը կատարվում է հետևյալ գնացուցակի հիման վրա՝

1 Գիշերակացի արժեքը	դրամ
Ընդամենը հյուրանոցի Գումար	դրամ
Սոց. փաթեթի գումար	դրամ
Հյուրի հավելվածի գումար	դրամ
Այլ ծախսեր	դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	դրամ

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետով նշված ծառայությունների արժեքը Կատարողի կողմից կարող են միակողմանիորեն ավելացվել, պայմանով, որ Կատարողը պարտավոր է փաստաթղթերով հիմնավորել պայմանագրի գնի աճը, որը իր հերթին կարող է վերաբերել միայն տրանսպորտային ծախսերին, մաքսային գանձումներին, որոնք վերաբերում են օդանավակայաններին և նավահանգիստներին և տարադրամի փոխարժեքին:

3.3 Պայմանագրում նշված գինը չի կարող աճել մեկնման ժամկետին նախորդող 20 օրվա ժամանակահատվածում:

3.4 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու կամ դրամարկղ կանխիկ վճարելու միջոցով:

3.5 Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, սույն պայմանագրի ստորագրման պահից _____ օրվա ընթացքում:

4. Տույժերը

Պայմանգիրը վաղաժանկետ դադարելու կամ պայմանագրով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում՝ պատվիրատուի նկատմամբ կիրարկող տուգանքի չափ է սահմանվում:

ա. Պայմանագրի գնի մինչև 25% (քսանհինգ տոկոսի) չափով, եթե պատվիրատուն հրաժարվել է պայմանագրից ոչ ուշ, քան պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ:

բ. Պայմանագրի գնի մինչև 50 % (հիսուն տոկոսի) չափով, եթե պատվիրատուն պայմանագրից հրաժարվել է սույն ենթակետի <<ա>> պարբերությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել պայմանագրով նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին գրավոր ծանուցումը

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄՄԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջր հեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 15 օրացուցային օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, բացառությամբ սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված պայմանագրի գնի՝ Կատարողի կողմից միակողմանիորեն ավելացնելու դեպքի:

6.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.3. Այն դեպքում, երբ սույն պայմանագրով նշված ծառայությունները մատուցված են և զբոսաշրջիկին մատուցված ծառայությունները սահմանված ժամկետում՝ ծառայությունները մատուցման օրվանից մինչև ընթացիկ տարվա ավարտը, վճարված չեն կամ մասնակի են վճարված, ապա զբոսաշրջիկը անձնական պատասխանատվություն է կրում պայմանագրով սահմանված ծառայությունների համար:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող

(ազգանունը, անունը)
Հասցե՝ Երևան, _____

Աշխ վայր՝ _____

Անձնագրային տվյալներ՝ _____

(ստորագրություն)

«Էլիտա» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զաքյան 13/2,
ՀՎՀՀ՝ 02537891
Հալիքագնեսրանկ /Հ/11500-784433100

Տնօրեն՝ Ս. Կարաբեկյան

(ստորագրություն)